42. ՀՈՒՔՄ Ի ԽԱՐԱԽՈՒՇ

Կէղնի, չէղնի թագավորըմ կէղնի։ Էդ թագավորին վազիրըմ կէղնի։ Թագավոր կրերե զուր թագավորության հուքմ թասլիմ կէնե վազիրին։ Կասե.—Անուն իմ, հուքմ քում թըղ էղնի. գնա, ինչ կուզիս՝ էրե։

Քանի մը տարի վազիրն է, հուքմ ի խարախուշով թագավորութեն կէնե էդ քաղքի մեջ։

Օրըմ էդ քաղքի մեջ գողըմ կէրթա մտնի ջուլկի տուն, գողութեն կէնե։ Էդ ջուլկի մկուկն, ճաղերն ու սանդը լե պատեն կախուկ կէղնեն։ Գողն է, էս դին կօլըրտի, էն դին կօլըրտի, բանըմ չգտնա, կիգա մութըն-վեր, ասըռվի ջուլկի հաճրթներ, ճաղեր կքիսի գողու աչք, զգողու աչք կհանե։

Կէլնի թողե, կէրթա ուր տուն, կասե. «Լուսուն ես պիտի էլնիմ էր-թամ վազիրի մոտ գանգատ, զօղորդ պիտի ասեմ։ Պիտի ասեմ, թե «Հ՝է-սօր գիշեր գացեր ենք ֆլան ջուլկի տուն գողութեն, ջուլհակ բերեր էր զուր հաճրթներ կախի պատեն, ափըլթըփեցի, ճաղ քիսավ աչքս, քոռ-ցավ։ Կանչե զէդ ջուլհակ բի, տեսնամ հ՝որի՞ն զուր հաճրթներ էնտեղեն կախեր էր»։

Լուսուն օր կէղնի, կէլնի կէրթա վազիրի մոտ գանգատ։ Կասե.— Ես էկեր իմ քու մոտ գանգատ, զօղորդ պիտի ասեմ քըզիկ։ Ես էկա հ՝իրկուն, մտա էդա քաղքի մեջ, օր գողութեն էնենք, գացի մտա ջուլկի տուն, հ՝ուր օր զարկվեցա, բան չհ՝ընկավ ձեռքս, էկա պատն ասըռվա, քիսավ ճաղ աչքս, քոռցավ։ Կանչե, բի զէդ ջուլհակ, տեսնամ հ՝որի՞ն պիտի զուր հաճրթներ կախեր պատեն, օր առներ աչքս, քոռներ։

Աֆանդրմ, էդ վազիրն է, գողու պես բիլմազ մեկ մըն էր։ Կէլնի,

մարդ կճամբե շուլկին, կառնե կիդա։ Կբերե, կասե.—Հ՚էսօր գիշեր էդա մարդ էկեր է քու տուն գողութենի, քու հաճրթներ առեր ին մարդու աչք, քոռցուցեր ին, զքու աչք կհանեմ, դնեմ էդ մարդու աչից տեղ։

Ջուլհակ կասե.— Ջանըմ, ես ասի՞ էդ մարդուն՝ թըղ հ՚իգա իմ տուն, գողութեն էնե։ Ես սանյաթքար մարդըմ իմ, հ՚իրկուն օր գործ էնելուց կխըլըսիմ, կքոմիմ զիմ հաճրթներ, կզարկիմ պատ, օր չիգան կոխրոճին կոտրի, ընծիկ ի՞նչ հանցանք կա։

Մարդ ինչքան աստծու սուր ու թուր զարկեց, չարա չէղավ։ Ֆքրավ, ասեց. «Ես սանյաթքար մարդ իմ, մեկ աչքով կթալեմ զմկուկս, մեկել աչքով կիշքեմ, կբռնեմ, օր իմ մեկ աչք չէղնի, չըմ կըռնա գործ էնի։ Կանի բանըմ լե ես կասիմ, տեսնամ իմա՞լ կէղնի»։ Կասե.—Ջանըմ, ես սանյաթքար մարդըմ եմ, իմ մեկ աչք հանեք, էլ չըմ կռնա գործի, անոթից կմեռնեմ, ես մեկ աչքով կթալեմ զմկուկ, մեկել աչքով կիշքեմ, կբռնեմ. իմ էրկու աչք չէղնի՝ չէղնի։ Կէղնի՝ ֆլան տեղ թախըմըմ ծակող կա, էնի մեկ աչք կճտե, մեկել աչքով կծակե, բերեք զէնդոր աչք հանեք։

Ասին.— Օր հըմալ է, դու գնա քու տուն, մենք գինանք ու չըպուխճին։

Ջուլհակ օր գնաց, ճամբին, զչըբուխճին առան, էկան։ Օր բերին, խարախուշ հուքմ էնող վազիրն ասաց.—Չըբուխճի, զքզիկ բերեր իմ, օր զքու աչք հանիմ։

Չըբուխճին ամութամ նստուկ էղեր է ուր տուն։ Կասե.—Ջանըմ, ես բանե խապար չունեմ, դուք զիմ աչք հ՚որի՞ պիտի հանեք։

Աֆանդըմ, վազիր կասե.— Գող էկեր է, մտի շուլհակի տուն, ջուլկի շիշ քիսեր է գողու աչք, քոռցեր է, հըմկա մեր օրենքով պետք է շուլկի աչք հանենք գողու աչքի տեղ։ Ջուլհակ չոլուխ-չոճուխի տեր է, ուր արհեստ լե մեկ աչքով չբանի, մեկ աչք թալե զմկուկ, մեկել աչք չտեսնա, օր բռնե։ Քու արհեստ մեկ աչքով կբանի, որոշեր ինք զքու աչք հանենք ջուլկի աչքի տեղ։

Չըբուխճին է, ինչքան խնդրեց, աղաչեց, անկաճ չէրին, տեսավ օր ղինք չպիտի կըռնա ազատե, ճար կտրավ, ասեց.—Օղորդ օր ասեր ին՝ չըբուխճութենն մեկ աչքով կբանի։ Ջօղորդ չասած են, ընծիկ լե էրկու աչք պետք է, մեկով օր վերին դին իշքեմ, մեկով լե ներքին դին, օր կշտեն չծակիմ զչըպուխ։

Խարախուշն ասեց.— Շատ աղեկ, զքու աչք չհանենք, էլ վի՞ր աչք հանենք։

Չըբուխճին աղեկըմ մտածեց, ասեց.—Ֆլան քյոշեն ավճի մը կա, էնի մինակ մեկ աչքով ավճութենն կէնե, մեկ աչք լե չէղնի՝ կէղնի. բի, զէնդոր աչք հանե։

Հուքմ ի խարախուշն է, ասեց.—Մատամ օր հրմալ է, էրկու աչք չէզնի, քու սանյաթ չբանի ու դու լե կնիկ-ճիժու տեր իս, հայդե գնա. կճամբենք, զէգ ավճին կառնենք, հ՝իգանք։

Ճամբին, զավճին առան, էկան։

Ավճին ամութամ էր, բանե խապար չէր։ Օր բերին զավճին, վազիր վերուց ասեց.— Ավճի, զքզիկ բերեր իմ, օր զքու աչք հանիմ, չբուխճու աչքի տեղ։

Ավճին ասեց.—Ջանըմ, ես բանե խապար չունեմ, պիլա հախ տեղ, զիմ աչք հ՝որի՞ն պիտի հանեք չբուխճու աչքի տեղ։

Խարախուշ վերուց ասեց.— Խալթ մ՝էնի, դու գինաս օր օրենք հուքմ ի խարախուշ է, մատամ օր էնդոնց սանյաթ էրկու աչքով չբանի ու քու սանյաթ կբանի մեկ աչքով, զքու աչք կհանենք չբուխճու աչքի տեղ։

Ավճին ասեց.—Ջանըմ, ես բանըմ չըմ հասկնա, հալպաթ սապապ ի՞նչ է, օր դուք զիմ աչք կհանեք չբուխճու աչքի տեղ։

Վազիրն վերուց գլխեն, ասեց թե.— Ես քզիկ գլխեն հասկըցում. գող մտեր է ջուլկի տուն, ջուլկի շիշ քիսեր է գողու աչք, քոռցեր է։ Մեր Հուքմի խարախուշով պետք էր ջուլկի աչք հանենք գողու աչքի տեղ։ Ջուլհակն ասեց. «Ես չոլուխ-չոճուխի տեր իմ, իմ արհեստ մեկ աչքով լե չբանի»։ Ասին. «Չբուխճու արհեստ մեկ աչքով կբանի, բերինք չբուխճու աչք հանենք»։ Թախիխ էրինք, օր չբուխճու արհեստ լե մեկ աչքով չբանի, հասկցանք, օր քու արհեստ մեկ աչքով կբանի։ Բերինք զքու մեկ աչք հանենք, էնդոնց աչքերու տեղ, իտանք գողուն. քու արհեստ մեկ աչքով լե կբանի։

Ավճին ասեց.— Քու օտնեն կխնդրեմ, էկո զիմ աչք մը հանի, օրըմ ես քզիկ պետք կիգամ։

Խարախուշն հերսոտավ, քֆրեց.—Շան որդի, ես հյուքըմտար մը, դու ավճի մը, դու ընծիկ ի՞նչ պետք պիտի հ՝իգաս։

Ավճին ասեց.— Գինաս իմա՞լ քզիկ պետք կիգամ. ես հավքերու լեզվեն կհասկնամ, բազի հեղ կէրթաս ավճութենի, հավք կրոնիս, էնդոնք կխոսան, դու չըս հասկնա, գիկամ կխոսամ, կհասկցոմ քզիկ. էղավ աղեկութեն, գնաց։

Վաղիրն ասեց.— Ինչպե՞ս դու կհասկնաս հավքու լեզու։

Ավճին ասեց.— Հրմալ, կհասկնամ։

— Օր,— ասեց,— դու հավքերու լեզվեն կհասկնաս, հայդե, զքզիկ ազատ էրի, գնա։ Բըլե տես, օր հավք բռնելու էղնեմ, կանչեմ զքզիկ, հ՝իգաս ու չկրռնաս թարգմանիս զէնդոնց լեզուն, զգլուխդ կզարկիմ։

Ավճին ասեց.— Թըղ էղնի, օր չգիտցա, զիմ գլուխ զարկ։

Թողեց գնաց։

Ժում ու ժամանակում մնաց, թագավոր, սող միսալի, իմալ օր օսմանցու թագավոր զուր հուքմ տվեր է էնվեր փաշի ձեռք, թագավոր նըստավ վըր ուր թախտին, կանչեց զՀուքմ ի Խարախուշն, առավ էկավ, Հ'իրարու հետ խորաթա կէնեն ուրանց էրկրի հալ ու հալպթի վրեն։

Թագավոր մեկ լե տեսավ, օր էրկու ճնճուղ էկան, նստան փանջարի 22ի վրեն, կճրվճրվեն ու կտուցով Հ'իրարու կզարկեն։ Մտածեց, ասեց.— Խարախուշ, ժը խերախոտեսա, մեկըմ էղներ էդա ճրնճրղներու լեզվեն հասկնար, տեսնանք էդոնք Հ'որի՞ կկըռվըտեն։

Խարախուշն ասեց.— Թե օր թագավոր ապրած կենա, հրաման իտա, թարգմանող կա էդոնց լեղուեն։

Թագավորն ասեց.—Ո՞րն է էդոնց լեղուեն հասկցող. օր կա, հալղե, հրաման էրի, կանչե թըղ Հ'իգա։

Ճամբեցին զավճու ետև, առան էկան։

Ավճին առան էկան, ներս մտավ տեսավ, օր թագավորն ու Խարախուշ մենակ ին նստուկ։ Վախեցավ, ասեց. «Ջանըմ, էդրանք զիս Հ'որի՞ն են կանչի»։

Մտավ ներս, թամանա էրեց, կանավ։

Թագավորն ասեց.— Ավճի, Հ'առաջ էկո։

Հ'առաջ էկավ։ Տեռ ճրնճրղներ կանուկ ին ու Հ'իրարու կզարկեն։

Ասաց.—Ավճի, դու էդա ճրնճրղներու լեղուեն կհասկնա՞ս։

Ավճին ասեց.— Կհասկնամ։

Թագավորն ասեց.— Օր կհասկնաս, նստի Հ'ոգա, թարիֆ էրե, տեսնամ ի՞նչ կասեն, ընծիկ հասկցուր։

Ավճին անկաճ դրեց ճրնճրղներու ձենին, քիչըմ վրեն մտածեց, դառցավ թագավորի դին, ասեց.—Թագավոր ապրած, հասկցա, ինչ կասեն Հ'իրարու։

Թագավորն ասեց.— Օր հասկցար, պատմե, տեսնամ ի՞նչ կասեն։

Ավճին վերուց ասեց.—Էն մեկ ճրնճուղ էկեր է մեկել ճնճղի ախչիկ կուզե ուր տղին։

Թագավորն ասեց.— Շատ աղեկ, օր հըմալ է, հասկցի տես, ախչկա տեր կի՞տա զուր ախչիկ, թը՞ չի տա։

Կենա անկաճ դրեց, տեսավ օր ճրնճրղներ մեկ լե առան ճվճվալ Հ'իրարու հետ։ Տեսավ օր ախչկա տերն ասեց, օր. «Ես զիմ ախչիկ իտամ, խալան շատ կառնեմ, կա՞ռնաս իտաս, Հ'առաջ էկո, չըս կըռնա իտա, դու՝ քու տուն, ես իմ տուն»։

Ճընճղներ մեկ լե վերցին ճվճվացին Ս՝իրարու հետ։ Թագավորն ասեց.— Ի՞նչ կասեն։

Ավճին ասեց.—Կասե քու ախչկա խալան ի՞նչ է, հ՝ուզե իտամ։ Ախչկա տերն ասեց. «Իմ ախչկա խալան յոթ հատ խառաբա գեղ է, կիտաս՝ էկո մեյդան, չիտաս, դու՝ քու տուն, ես՝ իմ տուն»։

Ճընճղներ մեկ լե ճվճվացին, Թագավորն ասեց.—Ըստ հաղ ի՞նչ կասեն։

Ասեց.— Կասե տղի տեր. «Աշխարհք շեն է, էդի յոթ խառաբա գեղ կհ՝ուզե, իմա՞լ իտանք զէդոր խալանն։ Ընկավ էդոր մտքեն Հուքմ ի Խարախուշին, ասեց. «Թե օր Հուքմ ի Խարախուշեն հըմլա էրթա, գալ տարի լ՝ էսօր չէ թե յոթ գեղ, քսանյոթ գեղ կըռնամ իտամ քզիկ խալան. թը ։է՝ մեկ լե չըմ կըռնա իտա»։

Ճընճղներ մեկ լե ճվճվացին։

Թագավորն ասեց.—Ի՞նչ կասեն, էդ Հուքմ ի Խարախուշն ի՞նչ է։

Ավճին ասեց.—Էդ քու էրկրի մեջ օր Հուքմ ի Խարախուշեն հուքմ կէնե, էդպես է։ Գողին մեկ կէլնի էրթա մտնի ջուլկի տուն, գողութեն կէնե, ջուլկին բան չէղնի, մինակ ուր դազկյահ կէղնի, դազկի մեջ շիշըմ կէղնի, կէղնի զարկուկ պատ։ Դես ու դեն կզարկվի գող, բան չգտնա, կէրթա էդ պատի հ՝առեջ, օր դազկեն կախուկ է, շիշ կքեսի, գողու աչք, կքոռնա։ Գողն է, ուր աչքեն կբռնե, կէլնի դուրս, կմտածե, կասե՝ ես էկա մտա էդա մարդու տուն, օր գողութեն էնենք, բան լե չկեր օր գողնենք, քիսավ շիշ, իմ աչք քոռցավ, վալլահի, հըմլա չէղնի, լուսուն ես պիտի էլնեմ էրթամ Խարախուշի մոտ գանգատ շուլկի վրեն։ Կէլնի լուսուն, աչք կկապե, կիգա Խարախուշի մոտ գանգատ ջուլկի վրեն։ Խարախուշ զէդ գողն օր կտեսնա, կասե՝ հ՝ո՞րին իս էկի։ Գողն կասե. «Ես էլա գիշեր, գացի ջուլկի տուն գողութեն, շուլհակ քնուկ էր, փնտռտեցի ուր տուն, բան լե չկըռցա գտա, գիշեր ու մութ էր, օլըրտելուս մեջ էկա պատի մը հ՝առեջ, էդոր գործիք պատեն կախուկ էր, շիշըմ կեր մեջ, առավ աչքս, քոռցավ, դու ի՞նչ կասիս»։ Հուքմ ի Խարախուշն է, կվերցու կասե. «Մեր օրենքով պետք է բերին ջուլկի աչք հանենք քու աչքի տեղ»։ Կճամբեն, զջուլհակ կառնեն, կիգան։ Կբերեն, Հուքմ ի Խարախուշ կհարցու ջուլհակ. «Քու շիշ հ՝ո՞րին է զէդոր աչք հանի»։ Ջուլհակ կասե. «Ես ի՞նչ գինամ, հ՝որին է հանի, ես գինամ, օր գողըմ էկեր է մտի իմ տուն, աչք քեսեր է շիշ ու քոռցեր է»։ Հուքմի Խարախուշն կըսե շուլկին. «Զքու դազկյահ հ՝որի՞ն ես կախի քու պատեն, օր աչք քիսեր, հ՝ինք քոռներ, օր մատամ կախեր իս, զքու աչք կհանիմ գողու աչքի տեղ, իտամ գողունն»։ Ջուլհակն կասե. «Ես խեղճ եմ, չոլուխ-չոճուխի տեր եմ, զիմ աչք հանես,

իմ չոլուխ-չոճուխ անոթից կմեռնի, ես ասի՝ թըղ իգա մտնի իմ տուն. ինք է էկի մոտ, որ զիմ աչք հանես, իմ սանյաթ կմեռնի, ես մեկ աչքով չըմ կըռնա ջուլկութեն էնի, մեկ աչքով զմկուկ կթալեմ, մեկել աչքով կբռնեմ, որ էն աչք չէղնի, չըմ կռնա զմկուկ թալի ու բռնի»։ «Շատ աղեկ, դու որ էգ խըտար զար ու զուրի կէնիս, զքու աչք չհանեմ, ըպա ըղվի՞ր հանեմ»։ Կասե. «Ֆլան տեխ չըպուխճի մը կա, ընդոր սանյաթ մեկ աչքով կբանի, բերեք զէնդոր աչք հանեք»։ Ջջուլհակ կթողեն կէրթա, կճամբեն, զչըպուխճին կառնեն, կիգան։ Չըպուխճին բանե խապար չունի, ամութամ նստուկ կէղնի ուր տուն։ Կիգա չըպուխճին կասե. «Ջիս հ՞ո-րի՞ն եք կանչի»։ Կասե Հուքմ ի Խարախուշ. «Կանչեր ենք, զքու աչք հանենք ջուլկի աչքի տեղ»։ «Ջանըմ,—կասե,— զիմ աչք հ՞ո՞րին կհանենք ջուլկի աչքի տեղ»։ Հուքմ ի Խարախուշ կասե. «Ջուլհակ օղուլ-ուշաղի տեր է, ուր մեկ աչք հանենք, մեկել աչքով էլ չը կըռնա բանի, քու սանյաթ մեկ աչքով լե կէղնի»։ Չըբուխճին լե կտեսնա որ Հուքմ ի Խարախուշ է, զուր աչք պիտի հանեն, կմտածե, ինքն ուրեն կասե. «Օղորդ որ ասեր են իմ սանյաթ մեկ աչքով կբանի, յա՞լիշ են ասած, իմ սանյաթ լե մեկ աչքով չբանի, որ մեկ աչքով ծակեմ՝ կշտեն կիտա դուրս։ Կէղնի իսա, ես լե չոլուխ-չոճուխի տեր եմ, իմ չոլուխ-չոճուխ լե անոթից կմեռնեն, թողեք զիս էրթամ, ֆլան ավճին բերեք, զէնդոր աչք հանեք, ավճութեն մեկ աչքով լե կէղնի»։ Կճամբեն, զավճին կառնեն, կիգան։ Թագավորն ապրած, էդ ավճին լե ես եմ։

Որ ասեց՝ էդ ավճին ես եմ, վազիր զօռ ճխտեց գետին։

— Կանչին զիս բերին, ընծիկ լե ասին՝ զքզիկ բերինք, զքու աչք կհանենք չըբուխճու աչքի տեղ, կիտանք գողում, դնե ուր աչքի տեղ։ Ես լե մտածեցի, որ զիմ աչք կհանին, իմալ պիտի էնեմ, կանի ճամբե մը գտնամ, ազատիմ։ Ասի՝ զիմ աչք մը զարկի, ես ճընճըղու լեզուից կհասկընամ, օրըմ աղեկութեն կէնեմ քզիկ, կէլնի կէրթա։ Ասեց՝ «Ի՞նչ աղեկութեն կէնիս ընծիկ»։ Ասի. «Օրըմ էրկու ճընճուղ կբռնիս, կկանչիս զիս, կիգամ, էնդոնք կխոսան, ես լե թարիֆ կէնիմ քզիկ, կէղնի կէրթա»։ Էդոր վրեն թողեց, գացի։

Վերուց ավճին ասեց.— Որ Հուքմ ի Խարախուշ տարի մը էսօր լե դավամ էնե, ճընճուղ յոթ գեղ լե կիտա, քսանույոթ լե։

— Իմա՞լ,— ասաց թագավոր,— հըմկա իմ էրկրի հուքմ հըմլա՞ է էղի։

Ավճին ասեց.— Հա, վալլահի, հըմլա է էղի։ Կուզիս ավդըցիր, կուզիս մ'ավդընա. չըս ավդընա իմ ասածներուն, ես ճընճղու լեզվից լե չըմ հասկնա, կուզիս հարցու քու վազիրից։

Վազիրից հարցուց, լալցավ մնաց։ Օր լալցավ մնաց, կանչեց զջալադչին, ասեց.— Տարեք, զէդա վազիրի գլուխ զարկեք։

Վազիրի գլուխ օր տվեց զարկել, նոր առավ զթագավորութեն ուր ձեռք։ Նստավ ուր թախտին ու կառավարեց ուր ժողովուրդ։

Աստծուց հ'իջավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ անկաճ դնողին։